ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2023 թվականի N 485 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 323-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, նույն հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի 2023 թվականի նոյեմբերի 8-ի N 76/1-994 գրությունը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կառուցվածքը հաստատելու, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 51-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 323-Ա որոշման վերնագրում և տեքստում «Սյունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների» բառերը փոխարինել «Քաղաքացիական պաշտպանության Սյունիքի մարզային ծառայությունների» բառերով:

2. Նույն որոշման հավելվածի 7-րդ պարբերության «Դավիթ Հովհաննիսյան» բառերը փոխարինել «Վաղարշակ Գինոսյան» բառերով:

3. Նույն որոշման հավելվածի 7-րդ պարբերության «ՀՀ ՆԳՆ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ (համաձայնությամբ)» բառերը փոխարինել «ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կապանի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ (համաձայնությամբ)» բառերով:

24.11.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 24

ք. Կապան